



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

07.04.2013 թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ


Ձերն բարենադրանքներով և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Մայրության և գեղեցկության տոնի առիթով:

Թո՛ղ որ, մայրության և գեղեցկության անկրկնելի ու հիասքանչ խորհուրդը Ձեզ պարզևի անսահման երջանկություն և տոնական յուրահատուկ զգացողություններ՝ իրականություն դարձնելով բոլոր նվիրական իղձերն ու երազանքները:

Տոնական այս բացառիկ օրվա շնորհավորանքներին պետք է զուգահեռենք նաև մեր անսահման երախտագիտությունը հայ մայրերի ու կանանց հանդեպ և փաստենք, որ Ձեր հավատարմության ու խոհեմության շնորհիվ միշտ եղել եք ազգապահպանության և մեր ժողովրդի բազում հաղթանակների անկյունաքարը:

Կանանց միամայակի ավարտն ազդարարող, բայց միևնույն ժամանակ գարնանային երանգների և բնության զարթոնքի հետ համադրվող այս սքանչելի տոնի առթիվ դարձյալ շնորհավորում եմ և մաղթում, որ մեր մայրերի, կանանց, քույրերի ու աղջիկների առօրյայում հարատեն սիրո, ընտանեկան ջերմության, խաղաղության և բարության զգացողությունները:

Հարգանքներով

 Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ